ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՆՀԱՂԹ ԱՔԼՈՐԸ

Լինում է չի լինում՝ մի աքլոր է լինում:
Էս աքլորը քուջուջ անելիս մի ոսկի է գտնում:
Կտուրն է արձրանում, ձեն է տալիս.
Ծուղրուղու, փող եմ գտել...
Թագավորը լսում է, իր նազիր-վեզիրին հրամայում՝ գնան խլեն երեն:
Նազիր-վեզիրը գնում են՝ խլում երում:
Աքլորը կանչում է.
Ծուղրուղու, թագավորն ինձանով ապրեց...
Թագավորը ոսկին ետ տալիս է նազիր-վեզիրին, ասում է.
Ետ տարեք, իրեն տվեք, թե չէ աշխարհքովը մին կխայտառակի մեզ էդ անպիտանը...
Նազիր-վեզիրը ոսկին տանում են, ետ տալիս աքլորին:
Աքլորն էլ կտուրն է արձրանում.
Ծուղրուղու, թագավորն ինձից վախեց...
Թագավորը արկանում է, իր նազիր-վեզիրին հրամայում է.
Գնացե՛ք,- աում է,- ռնեցեք էդ սրիկային, գլուխը կտրեցեք, եփեցեք երեք ուտեմ, պրծնեմ դրանից:
Նազիր-վեզիրը գնում են աքլորին ռնում են, որ տանեն: Տանելիս կանչում է.
Ծուղրուղու, թագավորն ինձ հյուր է կանչել...
Տանում են մորթում, պղինձն են կոխում, որ եփեն, ձեն է տալի.
Ծուղրուղու, թագավորն ինձ տաք-տաք աղնիք է ղրկել...
Եփում են երում թագավորի առաջ են դնում, կանչում է.
Թագավորի հետ սեղան եմ նստել, ծուղրուղու...
Թագավորը շտապով վերցնում է կուլ տալի: Կոկորդով գնալիս կանչում է.
Նեղ-նեղ փողոցներով անց եմ կենում, ծուղրուղու
Թագավորը որ տեսնում է՝ կուլ տվեց, էլ չի ձենը կտրում, իր նազիր-վեզիրին հրամայում է թուրները հանած պատրաստ կենան, որ մին էլ ձեն ածի_ զարկեն:

Նազիր-վեզիրը թրերը հանած՝ պատրաստ կանգնում են մինը էս կողմը, մյուսը էն:
Աքլորը որ թագավորի փորն է հասնում, ձեն է տալի.
Լուս աշխարհքումն էի, մութ տեղն եմ ընկել, ծուղրուղո՜ւ...
Զարկեցե՛ք...- հրամայում է թագավորը:
Նազիր-վեզիրը զարկում են, տալիս են թագավորի փորը պատռում:
Աքլորը դուրս է պրծնում, փախչում է, կտեր ծերին կանգնում, ձեն տալի.
Ծուղրուղու